ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----» դեկտեմբերի 2015թ. N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.122՝ 90.8 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0206 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Գալստյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.122՝ 90.8 քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հոբոյահարների կոնցերտմայստեր, ՀՀ վաստակավոր արտիստ Աշոտ Գալստյանին:

Աշոտ Գալստյանը ծնվել է 1962 թվականին, Երևանում: Երաժշտական կրթությունը ստացել է Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի հոբոյի դասարանում: Հետագայում, ընդունվել է Երևանի երաժշտամանկավարժական ուսումնարանը, իսկ 1981 թվականին ուսումը շարունակել է Երևանի պետական կոնսերվատորիայում, որն ավարտել է 1986 թվականին: Նա բազմաթիվ հանրապետական և համամիութենական մրցանակների դափնեկիր է: Այսօր հանդես է գալիս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբում՝ որպես հոբոյահարների խմբի կոնցերտմայստեր: Աշոտ Գալստյանը նվագախմբի կազմում հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրների աշխարհահռչակ դահլիճներում՝ Նյու Յորքի «Քառնեգի հոլ»-ում, Բոստոնի «Սիմֆոնիա հոլ»-ում, Լոս Անջելեսի «Դիզնեյ հոլ»-ում, Ավստրիայի Լինց քաղաքի «Բռուկներ հաուզ»-ում, Վիեննայի «Մյուզիք Վերայն»-ում, Վարշավայի «Նարոդով ֆիլհարմոնիա»-ում: Իր կարևոր մասնակցությունն է ունեցել նաև մի շարք փառատոններում, ինչպիսիք են՝ Իտալիայի «Ռավելլո» և «Մեռանո» փառատոնները և Լյուդվիգսհաֆենի «Բասֆ» փառատոնը: Համերգներով հանդես է եկել նաև Վիեննայի «ORF» հանրաճանաչ հեռուսաբնկերության ուղիղ եթերով: Օժտված է կատարողական բարձր վարպետությամբ և հանդիսանում է մեր օրերի լավագույն հոբոյահարներից մեկը: Վերջինս 2008 թվականին արժանացել է ՀՀ վաստակավոր արտիստի կոչմանը:

Աշոտ Գալստյանը զբաղվում է նաև մանկավարժական գործունեությամբ, տարիներ շարունակ դասավանդում է Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցում և Երևանի պետական կոնսերվատորիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա հոբոյահարներին:

Աշոտ Գալստյանի բնակարանային պայմաններն ապահովելու նպատակով միջնորդություն է ներկայացրել նաև Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը:

Աշոտ Գալստյանը իր կնոջ և երկու տարասեռ երեխաների հետ բնակվում է Կ.Ուլնեցու 3-րդ փակուղու, 1-ին շենքի հ.16 հասցեում գտնվող ազգականի տանը և, ցավոք, ունի բնակարանային պայմանների կարիքավորություն:

Հաշվի առնելով նրա մասնագիտական որակները, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.122 բնակարանը նվիրել նրան, որը թույլ կտա վաստակավոր արտիստին լիարժեք ստեղծագործական գործունեություն ծավալել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ